Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Դպ. Ամէն:

Սբէ. Օրհնեա տեր:

Քնն. Տէր Աստուած օրհնեցէ ՚ի զամենեանդ:

Սբէ. Մի ոք յերեխայից, մի ոք ի թերահաւատից, եւ մի ոք յապաշխարողաց եւ յանաբրից մերձեցի յաստուածային խորհուրդս:

Դպ. Մարմին տերունական եւ արիւն փրկչական կացցէ առաջի: Երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. սբ, սբ, սբ, Տէր զօրութեանց:

Սբէ. Սաղմոս ասացէք Տն Այ մերոյ, դպիւրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:

Ե- դպիրք եղանակէն Վրբասացո-նիւնն ըստ խորհրդոյ տ-տ-րն:

Սրբասացութիւնք:

Կե-րուիէց ե- եիեղեցոյ:

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քո, եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր: Եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրութիւնս ձայնիւ խորհրդակցանալ սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

1005
2000



Ծննդեան և Աստուածածնի:

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ միածին թաշաւորին: Որք երգէին եւ ասէին. սա է Որդին Աստուծոյ: Ամենեքեան ասասցուք. ուրախ լըրուք երկինք, եւ ցնծասցեն հիմունք աշխարհի. զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

Ձայլ սրբասացո-նի-նս յա-ո-ւ-ր պարշաճան րեա:

Վերաբերութիւն ընծայիցն:

Ասրիա-աբաւանին աւեալ զշրջան՝ եւ Բորվա-ր եւ մոսկէնս, եւ իան պարբասար օինչ-ւ-ասի սրբասացո-նի-նան: Եւ այս օի ի Ժանանայիցն աւանդընծայան ի խորհրդանոցեն. եւ ասրիա-աբաւանին Բորվարով եւ մոսկէնս՝ եւ շրջով աւանի եւ զինի երբևան, եւ ելանեն ի Բեմ. եւ շա-ր-լ Գալով շա-ր-բ սեղանովն Բերեն վերաժա-ր՝ ա- պարբա-ր-գին: Եւ պարբարգին աւեալ զընծայան՝ վերացո-ցանէ ակներե- ժողովրդեանն, եւ Բաղեցո-ցանէ ի վերայ սա-ր-բ սեղանոյն, եւ խոսնի արիանէ: Եւ շրջ եւ Բորվար այլ ոչ շարժի՝ օինչ-ւ-ասի Եւ ընդ սերովբեան:

Բայց թէ հանդիսա-որ օր լինի, եւ շխորհո-րդն վերաժեբել ի օնեցեն, շարբարղո-նի-նան րեա ի վայր, յերեւ 44:

Եւ օինչ րպիբրան երգեն՝ կիսասարիա-աբն Բերե ջո-ր. եւ Ժանանայն լո-անայ զժայրս մարանցն ասելով ի ցաժ. Լուացայց սրբութեամբ:

Քարոյ:

Սրի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես-ցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի խղճիւ եւ զայթազուութեամբ, մի նենգութեամբ խորամանկութեամբ, մի պատրանօք եւ խաբէութեամբ, մի երկմտութեամբ եւ մի թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան՝ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ. եւ զտոյք զողորմութեան զշնորհս՝ յաւուր յայանութեան եւ ի միւսանգամ զայստեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Աեցուսցէ եւ ողորմեսցի:

Դպ. Աեցո Տէր եւ ողորմեա:

Սրի. Օրհնեա տէր: Բն. Շնորհօք եւ մարգասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր միանգամայն եւ Հօգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ:

Խաղաղութիւն ք ամենեցուն: Դպ. Ամեն: Եւ ընդ հոգւոյդ քում: Սրի. Աստուծոյ երկրպագեսցուք: Դպ. Առաջի քո Տէր:

Սրի. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. եւ որք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք:

Ե- հաճո՞ւրեցե՞ն շեղան է- շի՞տան:

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեսցի. որ էնն Աստուած աստ բազմեսցի: Խաղաղութեան ձայն հնչեցաւ. Սուրբ ողջունիս հրաման տրուաւ: Թշնամութիւնն հեռացաւ. Սէր ընդ հանուորս սրփուեցաւ: Արդ պաշտօնեպէք բարձեալ ըզձայն, Տուք օրհնութիւն ի մի բերան՝ Միասնական աստուածութեանն, որում սրբէքն են սրբաբան:

Ո՞հնէ է- շայս ասէն ի հանդիսի Կօնի:

Սբէ՛. Որք հաւատով կայք յանդիման Սուրբ սեղանոյս արքայական. Տեսչէք բազմեալ զՔն՝ արքայն, Եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպ. Վերհամբառնամք զաչս ունելով, Եւ պաղատիմք զայս ասելով. Ըզմեղըս մեր մի յիշեսցես, Այլ դրժութեամբ քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ. Եւ ընդ սրբոց՝ Տէր փառք քեզ:

Սբէ՛. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք. Եւ նայեցարուք զգուշութեամբ:

Դպ. Առ քեզ Աստուած:

Սբէ՛. Պատարագ Քն մատչի գառն Այ:

Դպ. Ողորմութիւն Եւ խաղաղութիւն Եւ պատարագ օրհնութեան:

Սբէ՛. Օրհնեա տեր:

Քն. Շնորհք, սէր Եւ աստուածային սրբաբար զօրութիւնն Հօր Եւ Որդւոյ ՚ի Եւ Հօգւոյն սրբոց եղեցի ընդ ձեզ ընդ ամենեւեան:

Դպ. (Ամեն.) Եւ ընդ հոգւոյդ քում:

Սբէ՛. Զդրունս, զդրունս ամենայն իմաստութեամբ Եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:

Դպ. Ունիմք առ քեզ Տէր ամենակալ:

Սբէ՛. Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:

Դպ. Արժան եւ իրաւ:

Սբէ՛. Օրհնեա Տէր:

Քն. Եւ ընդ սերօբէսն Եւ ընդ քերօբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուազս, Եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին Եւ ասել:

Ի՞նչ ի հանդիսի ասորս ո՞հնէ զինի Արժան եւ իրաւն ասէն է- շայս:

Սբէ՛. Եւ զսոյգ փրկութեան՝ որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութիւն մատուցանեմք քեզ Քրիստոս: (Դպ.) Որով Եւ զհրաշայի (զյարութիւնդ քո*) գովեն զօրութիւնք: (Սբէ՛.) Սարսին սերովբէքն. (Դպ.) Գողան քերովբէքն: (Սբէ՛.) Եւ իշխանութիւնք վերին պետութեանցն պար առեալ ձայնիւ եղանակեն Եւ ասեն:

Դպ. Սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց: Լի են երկինք Եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս: Օրհնեալ որ եկիր Եւ զալոց Եւ անուամբ Տեառն. ովսանայ ի բարձունս:

Սբէ՛. Օրհնեա տեր:

Քն. Առէք կերայք... ի թողութի մեղաց:

Դպ. Ամեն:

Սբէ՛. Օրհնեա տեր:

* Ըստ խորհրդոյ աւուրն. տես երես 34:

Բհն. Արբէք ի սմանէ... ի թողութի մեղաց:

Դպ. Ամէն:

Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վան մեր՝ պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա, աղաչեմք զքեզ, ողորմեա քոյ բանաւոր հօտիս:

Աբի. Օրհնեա տէր:

Բհն. Եւ զքոյս ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Դպ. Յամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք զքեզ. զովեմք զքեզ. զօհանամք զքէն, աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր:

Աբի. Օրհնեա տէր:

Բհն. Խաղաղութիւն քի ընդ ամենեսեան:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Աբի. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն, հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քոյ սուրբ, աղաչեմք զքեզ, ողորմեա արեամբ քո փրկեալ հօտի:

Բահանայն խոնարհեալ ասէի ծածոնի զաղբն՝ երկիր պաղանեմք: Եւ սարխաւագն երկնիցն յիջեացէ յյեան եւ ասնոն զծածոյնն ի սուրբ Բաշխիւն, եւ խոնարհի յանկէն սեղանոյն: Իսկ բահանայն խաղաչեմք էնն անգամ եւ օրհնէ զհացն սուրբ եւ զբաշխիւն. եւ սարխաւագն (խնչարիւն ար ասեանոյն օրհնութիւնն,) եւ ասէ ի ցած՝ Ամէն: Եւ ի վճար երգոյն:

Աբի. Օրհնեա տէր:

Բհն. Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպ. Հողի Աստուծոյ, որ զփառակցի քոյ զտորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ, հանգոցհոգիս մերնն ջեցելոցն: (Եւ խոնի ածեն):

Աբի. Օրհնեա տէր:

Բհն. Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Բհն. Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամոն, եւ Յովհաննու մկրտչին, Ստեփանոսի նախավկային, եւ ամենայն սրբոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սարխաւագն յաւանոյն սեղանոյն յեանամած ասացէ:

Առաքելոց սրբոց, մարգարեից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւաղաց, եւ ամենայն սրբոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Տէրոնի սուրբն եւ պահոց:

Աբի. Օրհնեալ, զովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածադարդ (յարութեանն Բրիստոսի) երկիր պաղանեմք: Տէս երես 34:

Դպ. Փառք (յարութեան քոյ) Տէր:

Ի սօն Սրբոցն շայս ասս:

Աբի. Սուրբ եւ աստուածահաճոյ (առաքելոյն) այս անուն, որոյ պսօր զյիշատակն կատարեցաք՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սբէ. Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն սրբոց. Թադէոսի, եւ Բարթոլոմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի լուսաւորչին, Արիստակիսի, Արթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսէսի, Սահակայ, Գանիէլի եւ Խազայ, Մեսրոպայ վարդապետին, եւ Գրիգորի նարեկացոյն, եւ Ներսէսի կլայեցոյն: Եւ նա՛մ սրբ հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց՝ եղիցի յիշատակ ի սր պատարագս, աղաչեմք:

Դ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սբէ. Միանձնացելոց սրբոց, առաքինասեր եւ նա՛մուսոյց կրօնաւորացն, Պողոսի, Անտոնի, Պողայ, Մակարայ, Ռնոփրիոսի, աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւազրի. Յովհաննիսեանց, եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց, եւ Սուքիասանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սբէ. Թագաւորաց հաւատացելոց սրբոց, Աբգարու, Կրստանդիանոսի, Տրդատայ, եւ Թէոդոսի, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասեր իշխանաց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սբէ. Ընդ հանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ նա՛մ չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սբէ. Օրհնեա տէր:

Քնն. Եւս առաւել զսրբազան Պապն մեր զՏԻ (այս անուն), եւ զերջանիկ Պատրիարքն (կա՛մ ՂԱՐՔԵԱԿԻՍԿՈՎՈՍՆ) մեր զՏէր (այս անուն) շնորհեցես մեզ ընդ երկայնաւուրս ուղիղ վարդապետութի: (Ծանօթ զի ողորմեա սուրբնորդաց յայն լինի յիշատակ:)

Եւ այս ի յախակողմն սեղանոյն Կարողեացե սարկաւազն յեւո՛ղ աղօթից:

Բարոյ:

Պահութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր՝ վասն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարզեւեցես: Սովաւ շնորհեա զտէր, զհաստատութիւն, եւ զըզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ, եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել սրբազան Պապին մերոյ Տեառն (այս անուն), եւ պատուական Պատրիարքին մերոյ Տեառն (այս անուն), եւ Արքեպիսկոպոսին մերոյ Տեառն (այս անուն), եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեան եւ յաղթութեան թագաւորաց քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեցուք եւ խնդրեսցուք եւ վասն հողուոյն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց, եւ շինողաց սուրբ եկեղեցւոյս, եւ ողբ ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եղգարց մերոց դերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանդիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն: Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դոյ. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Սբի. Օրհնեա տեր:

Քն. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ փրկչիս մերոյ Յիսուսի ՚ի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեւեան:

Դոյ. (Ամեն.) Եւ ընդ հոգւոյդ քում:

Քարոյ:

Սբի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դոյ. Տէր ողորմեա:

Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս զՏէր աղ:

Դոյ. Տէր ողորմեա:

Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս զՏէր աղաչեսցուք:

Դոյ. Տէր ողորմեա:

Որպէս զի Տէր Աստուած մեր որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն, եւ զփոխանակն առաքեսցէ առ մեզ զչնորհս եւ զպարգեւս Հոգւոյն սրբոյ, զՏէր աղաչեսցուք:

Դոյ. Տէր ողորմեա:

Ընկալ, կեցո եւ ողորմեա եւ պահեա զմեզ

Տբ. քոյն շնորհիւդ: Դոյ. կեցո Տբ եւ ողորմեա:

Չամենասրբուհի զԱստուածածինն, զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսց:

Դոյ. Տէր ողորմեա:

Եւ եւս եւ վասն միաբանութեան ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Դոյ. Տէր ողորմեա:

Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դոյ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր բոսմեծի

ողորմութեան քում: Ասացուք ամենեքեան միաբանութեամբ:

Դոյ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սբի. Օրհնեա տեր:

Քն. Եւ սուր մեզ համարձակածայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնաորդ Հայր, երգել եւ սակ:

(Եւ սարխաւսն իռնի ածէ:)

Եւ Դպիրն բազկաբարձ սեն բարչր.

Հայր մեր որ յերկնսդ ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա ի չարէ:

Սբի. Օրհնեա տեր:

Քն. Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամեն:

Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Դոյ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սբի. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դոյ. Առաջի քո Տէր:

Քանանայն իռնարհի, Եւ ամենայն ժողովուրդն ընդ նա ի վայր:

Սբի. Օրհնեա տեր:

Քն. Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամք մերով. ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն: Եւ սառնս զսուրբ հացն ի յեսս:

Սարկա-աֆն յայն Բարձր. Պոստիսու մէ:
Քահանայն Բարձրացոցանէ ակնեբե- ժողովը-
դեանն, ե- ասէ. Ի սրբութիւն սրբոյ:

Դպիրքն. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս
Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Սարկա-աֆն. Օրհնեա տէր:
Քահանայն. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած
Ճշմարիտ: Դպիրքն. Ամէն:

Սարկա-աֆն. Օրհնեա տէր:
Քահանայն. Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած
Ճշմարիտ: Դպիրքն. Ամէն:

Սարկա-աֆն. Օրհնեա տէր:
Քահանայն. Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած
Ճշմարիտ: Դպիրքն. Ամէն:

Սարկա-աֆն. Օրհնեա տէր:
Քահանայն վերացոցանէ զպինն սորք ար-
եաֆն, ե- ասէ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիրքն. Ամէն: Հայր սուրբ. Որդիդ սուրբ.
Հոգիդ սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ
սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Սարկա-աֆն. Օրհնեա տէր:
Քահանայն վերացոցեալ զսորք Ժորժինն ե-
զբինն Տեառն՝ Բերցէ ի պեսո- ինն ժողովըդեանն,
ե- ասացեալ նոսա Բարձր. Ի սուրբ ի սուրբ
պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ
եւ փրկչին. Յիսուսի Քրիստոսի ճաշակեցուք
սրբութեամբ՝ որ իջեալ յերկնից բաշխի ի միջի
մերում: Սա է կեանք, յոյս, ի՛ յարութիւն,
քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս
ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ. սաղմոսասացէք

երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի
ի կառս քերովեականս:

Ե- Ժորժինն զլարաֆոյրն:

Քարոյ:

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ
մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս
հոգեւորս: Ձե սմա վայելեն սաղմոսք եւ օրհ-
նութիւնք, այլելուք եւ երգք հոգեւորք: Պաշ-
տօնեայք հանդերձ երգով սաղմոս ասացէք, եւ
զՏէր յերկինս օրհնեցէք:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Երբ:

Վարիստոս պատարագեալ բաշխի ի միջի
մերում. այլելուիս:

Չմարմին իւր տայ մեզ կերակուր. եւ սուրբ
զարին իւր ցօղէ ի մեզ. այլելուիս:

Մատիք առ Տէր եւ առէք զըյս. այլելուիս:
Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր.
այլելուիս:

Օրհնեցէք զՏէր յերկինս. այլելուիս. օրհ-
նեցէք զնա ի բարձունս. այլելուիս:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա.
այլելուիս. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք
նորա. այլելուիս:

(Չայլ երգս որն յերէն 36.)

Բաշխման սրբոյ Խորհրդոյն:

Քարոյն զլարաֆոյրն յեպ:

Սրկ. ասնո- զպինն ե- դարանայ ա- ժողովըդեանն
ասելով Բարձր. Երկիւղիւ եւ հաւատով յառաջ
մատիք, եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

(Ասացէք՝ մեղայ Աստուծոյ: Հաւատամ ի Հայր սուրբ յԱստուած Ճշմարիտ: Հաւատամ յՈրդի սուրբ Աստուած Ճշմարիտ: Հաւատամ ի Հոգի սուրբ յԱստուած Ճշմարիտ: Խոստովանիմ եւ հաւատամ զի սա է Ճշմարիտ մարմին եւ արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բառնայ զմեզ աշխարհի:)

Ե- առնայն արժանաւոր խոյզը-բոն հաղորդին. (ղլարականն՝ յերես 37): Ե- յեր հաղորդելոյն՝

Գոյ. Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քհն. Խաչակնիւ գժողով-բոն աւել Քարչր. կեցո Տէր զժողովուրդս քո. եւ օրհնեալ զժառանգութիւնս քո. հովուեա եւ բարձրացո զսոսայսմհնեալ մինչեւ յաւիտեան:

Ե- Բարչեալ Կարչն Ղլարագոյրն:

Գոյ. Եւ զարութեանց քոց Տէր. ճաշակելով զմարմին քո եւ զարիւն: Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Որ հանապաղ կերակրես զմեզ. առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւնդ: Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Ե- Բն զղորդին եղանակին՝ Լ-անայ Կահանայն ղյեւան: Ե- աւել զսուրբ սպասան արանին յառնաբարան:

Քարոյ:

Սրի. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Գոյ. Տէր ողորմես:

Եւ եւս հաւատով քնկալեալք յանձային, սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

Գոյ. Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեսցեր ըզմեզ յանմահական սեղանոյ քոյ: Բաշխելով զմարմին եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, եւ կեանք անձանց մերոց:

Ասարանօր Գղորդին եղանակին Տաղա խորհրդանորն՝ Բն զ- Կահանայն աւարտեսցէ ղկարգ աղբիկն:

(Ապա Բանան ղՂարագոյրն:)

Սրի. Օրհնեա աեր:

Ե- ապա առնու Կահանայն զաւարտանն սուրբ է յեսո է-ր, Ե- երկրպագեալ հաճոսրէ ղեղանն: Ե- էջեալ է Բջ եկեղեցոյն առ է յայն.

Աղբի:

Քհն. Որ օրհնես ղայնսպիկորք օրհնես զքեզ Տէր, եւ սուրբ առնես ղյուսացեալս ի քեզ: (Գոյ. Օրհնեալ է Աստուած:) կեցո զժողովուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո: Ձլլումն եկեղեցոյ քոյ պահեա. սրբեա զսոսարք ողբունեցին սիրով ղվայելութիւն տան քոյ: (Գոյ. Ամէն:) Գու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, եւ մի թողուր ղյուսացեալքս ի քեզ: Ձխաղաղութիւն քո պարգեւեա ամենայն աշխարհի. եկեղեցեաց, քահանայից, թաղաւորաց քրիստոնէից եւ ղհնուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս: (Գոյ. Ամէն:) Ձի ամենայն սուրբ բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի քէն՝ որ ես Հայր լուսոյ: Եւ քեզ վայելեն փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Գոյ. Ամէն:

Ե- առն երեցո. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհնեալ մինչեւ յաւիտեան:

Ե- Ժահանայն դահայ ա- շողովորդն է- ասի
ի յայն:

Կատարումն օրինաց եւ յարգարեցից դու ես
Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցեր զամե-
նայն հայրակամ սնորհութիւնս քո. լցո եւ
զմեզ Հոգւովդ քով սրբով:

Սբի. Օրթի:

Քհն. Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Դո. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սբի. Երկիրըածութեամբ լուարուք:

Քհն. Սբի աւետարանիս որ ըստ Յովհաննու:

Դո. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սբի. Պաօսխումէ:

Դո. Ասէ Աստուած:

Քհն. (Յհ. Ա. 1:) ՚ի Ի Հօրէն լուսոյ.

Խ սկզբանէ էր Բանն. Վերջ՝ 17. Քրիստոսի եղէն:

Իսի ՚ի յինանն. (Յովհ. ԻԱ. 15:)

՚ի Յեա յարութեան Տեառն մերոյ Յնի Քնի.

Խ- Իբրեւ ճաշեցին. Վերջ՝ 19. եկ զինի իմ:

Դո. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Քարոյ:

Սբի. Սուրբ խաչիւս աղաչեցուք զՏէր, զի
սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ
շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր
Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղբիւ:

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր
ընդ հովանեաւ սուրբ ՚ի եւ պատուական խաչի

քոյ ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ
յաներեւոյթ թշնամոյն: Արժանաւորեա գո-
հութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ
ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Դո. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ.
յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Ե- Ժահանայն խաչինս զժողովորդն, է- ասի.

Օրհնեալք եղերուք ՚ի ի շնորհաց սուրբ
Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, եւ Տէր
եղեցի ընդ ձեզ ընդ ամենեւեան. ամէն:

Ե- Ի Բաշիւն զնշխարս ա- շողովորդսն՝ երգեն
Սաղմոս ԼԳ:

Խ Տէր պարծեցցի՛ անձն իմ. լուիցեն հեզք
եւ ուրախ եղիցին:

Մե՛ծ արարէք ըզՏէր ինեւ. ՚ի լմն:

Փառք Հօր եւ. այժմ եւ միշտ:



ԵՐԳ ԺԱՅԱԿՍԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՌՈՒՐՅ ՁԱՐԵԹՈՒՆ

ԿԻՐԱԿԷԻ :

Ա՛լէմ՛: ըւհամ . ա՛ն՛է՛ն ձ՛րմ : մ : մ : մ : ը՛նհա՛ :

ԵՐԿԻՆՆԻՆՆԱՆ :

Լո՛յս ճը՛շմարիտ եւ ճանազա՛ն : յԹ Շօ՛ր . ծանգուն եւ կնիք . Բան եւ՛ն ճը՛նունդ : Որ կանգնեցեր յեթանոց սեանց զեկեղեցի՛ն ս՛ւրբ . անեալ ի սպանդ զեղն սարարա՛ն : Շնորհեա՛ն : մ : մ : մ : մեզ . կերակրիլ յիմաստութեան քում սեղանոյ . ողորմեա՛ն :

ԵՐԵԿԻՆՆԱՆ :

Հա՛ց կենաց եւ անմահութեան ճա՛նկ . սուրբ եւ անճառ սոսկալի՛ն խորհո՛ւրդ : Որ ի յերկնից իջեր կենդանութիւն մարդկա՛ն . կենդանի եւ կենդանարա՛ր : Պանսրգե՛ւեա ջա՛ղցելոցս ըզքաղցրութեան քում ճա՛շակումն . ողորմեա՛ն :

ՉԵՐԵԿԻՆՆԱՆ :

Գ՛մուրն երկնից եւ ճանապարհ արքայութե . տեր երկնի , ի յերկնայնոցն օրհնեալ դատուց : Որ զմարմին քո եւ զարիւնդ անսպական բաշխեցեր առաքելոցն : Մաքրեա զմեզ

հաղորդիլ սրբութեան քում խորհրդոյ . ողորմեա :

ՀԻՆԿՆԱՆՆԱՆ :

Բան Հօր եւ քահանայապետ սուրբ . յանմարմնոցն գովեալ ի բարձունս : Որ ի վերայ խաչին պատարագեալ մարմնով , հեղեր զարիւնդ ի փրկութիւն : Սրբեա զմեզս մեր կենարար եւ փրկական քաւիչ քո արեամբդ . ողորմեա :

ՈՐԵԿԻՆՆԱՆ :

Ա՛լմ հոգեւոր եւ գլուխ անկեան օծեալ . քարեքանեալ ի հրեշտակաց : Որ ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ , զանմահութիւն յօղեալ տիեզերաց : Արբո եւ մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան . ողորմեա :

ՇԱՐԿԻՆՆԱՆ :

Գառն Աստուծոյ զենեալ միշտ եւ կենդանի . անմեղ եկեալ ի պատարագ : Որ ի հաշտութիւն Հօր պատարագեալ բառնաս զմեզս աշխարհի . յանմահից զօրաց փառաւորեալ : Յիշեա զհոգիս հաւատով ի քեզ ննջեցելոցն մերոց . ողորմեա :

ՇԱՐԿԻՆՆԱՆ ԳԶ . ԿԱՊԱՆԱՆՈՅ :

Վերածգօղն երկնից մշտունջենանոր Հօր Ո՛րդին . ներդործեալ իմնիս ի վեր քան ըզհրանս . ծառայի առեալ ըզկերպ . անկողնպտելի աստուածութեամբն :

Բաշխե զմարմին իւր եւ զարիւն ը՛նս՛ր ուխտ անուանեալ եւ յիշատակ կամանոր մահուանն . մերձեցելոցս ի նաժ սրբութեամբ :

Ո՛ր մարմնով եւ արեանք քո ցուցեր ըզլծողութիւն մե՛զանց. որ ը մի՛ շտ պատարագիս ի մեզ անծախապէ՛ծս. մաքրեա՛ ի մէնջ ըզմեզ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա՛ զմեզ :

Ո՛ր քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քոյ. մահացելո՞ւն էս ի ճաշակմանէ նախահո՛ծքն. մաքրեա՛ ի մէնջ ըզմեզ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա՛ զմեզ :

Ո՛ր բարեբանիս յիմանալե՛ զըւարթնոցն. հաճեցար մարմնով պատարագիլ. արա՛ եւ զիս արժանի աստուածային շնորհիդ :

Ո՛րոյ աթո՛ւ. քերովրէ՛ ի վերնատունըն բազմեցար. կենարար բաժակաւդ ըզմեզ փրկեցեր. փրկեա՛ եւ զիս յաւիտենից ի հրոյն :

Ո՛ր կազմեցեր սեղան խորհրդոյ. եւ արբուցեր յանմահական բաժակէն. սրբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն. աղաչե՛մք փրկիչ սո՞ղո՞ւրմեա՛ :

Մաքրեա՛ ըզմիտս եւ ըզխորհուրդս. զի եւ մե՛ք հաղորդեցո՞ւք սրբութեամբ. ընդ սրբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն. աղաչե՛մք փրկիչ սո՞ղո՞ւրմեա՛ :

Բան շօր եւ քահանայապետ ճրճմարիտ. որ զաշխարհակեցոց ըզմարմին եւ զարիւնրդ քո բաշխեցեր յառաքելայնս. ա՛յսօր հաղորդին հոգեղէնքս աստուածայինն խորհրդոյդ. որդի՛ Նստուծոյ սո՞ղո՞ւրմեա՛ :

Այսօր վերբստին նորոգեցար ի յանիծից

նախահո՛ծքն. ճաշակելո՞ւն է ըզմարմին եւ զարիւն Որդւո՛ւն Նստուծոյ. օրհնեցէք ըզնա՛ հոգեւոր երգո՞վ :

Գ 2 :

Այսօր քահանայապետ ճրճմարիտ աստուածային օրինօ՛ւքն պատուեալ. կանգնէ ըզքառանկիւն սեղան խաչին. արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմինն եւ զարիւնըն Տեանն. մաքրապէս մերձեցարուք փրկեալ ը նո՛ր ժողովուրդք. եւ հայցեցէք ի Քրիստոսէ զի շնորհեսցէ ըզսա՛ մե՛զ ընդ երկայն աւուրս :

Գ 2 :

Ո՛ր հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո Քրիստո՛ծս ի վերայ առաքելական վեմի. երգել ի սմա՛ծ՝ զերդրս հոգեւորս :

Կանգնեալ ի սմա սեղան սրբութեան. բաշխէ զմարմին իւր եւ զարի՛ժւն. եւ սայ ի սմանէ մեզ նորոգութիւն. ի թողութի՛ժւն մեզանց մերոց :

Ի՛ջեալ Հողւոյն սրբոյ. անաւանկերպ երեւմածմբ. ի վերայ մարմնոյ եւ արեանըն Տեանն. ի բրժրչութի՛ժւն հոգւոց մերոց :

Տաղ Բաշխման. (Գ 2 :)

Մայր հաւատոյ սուրբ հարսնարան. եւ անազանս զերա՞յրական. Տուն փեսայիդ անմահական. Որ զարդարեաց զքե՛զ անվախճան :

Երկրորդ երկին դու հրաշահան:
 Փառացի քառու բարձրական.
 Որ զմեզ ծնանիս լուսոյ նրման
 Աւազանաւն որդիական:
 Բաշխես ըզհացրդ մաքրական,
 Չարիւնդ ըմպել տաս սոսկական.
 Հանես ի վեր գերաստիճան
 Իմանալեացքն զուգական:
 Ե կայք որդիք նոր Սինի.
 Մատիք առ Տէր մեր սրբբուն թեամբ.
 Ճաշակեցէք եւ տեսէք.
 Չի քայրդ է Տէր մեր զօրութեամբ:
 Նա բաժանեաց ըզՅորդանան.
 Գու զծով մեղաց աշխարհական.
 Նրմա Յեսու մեծ զօրական.
 Քեզ Տէր Յիսուս Հօր էական:
 Հինն օրինակ քեզ եւ նման.
 Գու խորանին գերադրական.
 Նա խորտակեաց զգրունս անգամանդ.
 Գու դրժոխոց զգրունս ի հիմանց:
 Հացս այս մարմին է քրիստոսի.
 Բաժակս արիւն նորոյ ուխտի.
 Ծածկեալ խորհուրդն մեծ յայտնի.
 Աստուած ի սմա մեզ տեսանի:
 Սա է քրիստոս Բանն Աստուած,
 Որ ընդ աջմէ Հօրն բազմի.
 Եւ աստ ի մեզ պատարագի.
 Բառնայ ըզմեղքս աշխարհի:
 Այն որ օրհնեալ է յաւիտեան
 Հարբ եւ Հոգևոյն միաբան.
 Այժմ եւ յաւէտ եւ յապագայն
 Եւ անսրպառ միշտ յաւիտեան:

Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ի Ն .

Եթէ եղեւիպոս լինէ խորհրդածոն, առնու եւ
 շտաբի կոնտրոլ եւ անէ ի վերայ լանջացն, եւ
 շարունական եօթնորոնն: Եւ դպիրքն եղանակն ի
 շէտարարիւն՝ Հր. Խորհուրդ խորին. երես 2:
 (Եւ յերթալն աւել շարակն եկեղեցոյ. Գ.2:

Այսօր անութիքն զուարճանայ նոր հաս-
 տատելով զերկիր. պարբք սուրբք փառաբա-
 նեն զուարթնոց. եւ մեք ձայնիւ օրհնութեամբ
 զարդարեսցունք սուրբ ըզօճոս: Այսօր եւ մեք
 ցընծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ. մեծա-
 պես փայլմամբ երեւեցաւ յաշխարհի. առ Աս-
 տուած դոհութիք ընթանան. պատմեն ան-
 դադար զընն կենդանի: Խորհրդաւ եւ զուար-
 ծայիր եկեղեցի. կոյս սբ եւ հարսն երկնաւոր
 փեսային. ահա տեսանմք զօճեալն ըզքրիս-
 տոս. գոլով առ քեզ լոյսն հեթանոսաց:

Կամ այլ շարակն եկեղեցոյ:

Եւ քան ի դոհու ի կեղեցոյն. եւ սխանին
 շարակն Գ.2:

Հրաշափառ Աստուած եւ միշտ բարե-
 խնամող. որ յանաջգիտութեամբ ըզփրկու-
 թիւն Հայաստանեայց ըսկըզնաւորեալ. ի պար-
 թեւակաւն մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ
 շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա
 փրկիչ կեցո ըզմեզ. այժմ եւ ի քո յահաւոր
 դալստեանն:)

կց: Թանգաւոր երկնաւոր. զեկեղեցիք քո ան-
շարժ պահեա. եւ զերկրպագողն անուանըդ
քունժ պահեա՞ ի խաղաղութեան:

Ե- ասէն Սաղմ. ԻԵ: կց. Լուացայց: Ե- այն
ասէնայն ըստ կարգի, երես 3: Ջիհի Աղաղակեցէք
սաղմունիքն Գրի. Սք եկեղեցեաւ աղաչեսց:

Աղբի:

Եպիս. Առ դրան սուրբ տաճարիս եւ առաջի
աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշա-
նացս եւ սուրբ խորանացս խոնարհեալ երկիր զի-
երկիր պաղանեմք. զսուրբ, զՏրաշալի եւ զյաղ-
թող (զյարութիւնդ) քո փառաւորեմք: Եւ
քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս
ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ:

Ե- մոռնեն յեկեղեցի սաղմունքով. կց. Մտից
առաջի: Փի. Դատ արա ինձ Աստուած. երես 6:

Ե- յետ ասելոյ զի յարկի սրբութեանն քան
սաղմունքն ընթացարան սեղանոյն, Ե- մարտոցեալ
անկանի եպիսկոպոսն սաղմ սրբոյ սեղանոյն ի վերայ
երեսայ իւրոց լսու եւ անմոռնել. Ե- սասայե
զԱղբին սա Հոգին սուրբ անօրինել քորձոյն:

Ամենակալ բարերար մարդասեր Աստուած բոլ:
Դարչեալ իրիւնցի ի նոյն կարգ բանի:
Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից հառաչ:

Ե- Եպիսոսն եղանակեն զեկեղեցի խորհրդաւոր կամ

Երբ:

Ընտրեալըդ յԱստուծոյն. ով երջանիկ քր
(հայրապետ.)
Նրմանեալ Ահարոնի. եւ Մովսէսի մարդ արեւին.

Այնմ որ զգեստուցն էր յօրինող. զոր Ահարոն
միշտ ըզգենայր:

Յօրինէր ըզպատմուածանն զոր ի շորից կազմեալ
նիւթոց .

Ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանոյ:
Թելըթելըն յօրինէր. կարգն առաջին էր
կարկեհան.

Եւ զօծումըն գրապանին շորջանակի բոլորաչէն:
Եւ յընթացըս գարշապարին հընչէր երկիր,
ցընծայր խորան:

Արդ ի նոյն նմանութեան՝ Քրիստոս ըզմեր տերս
յօրինէ:

Յորժամ մըտցես ի նք խորանն, անդ յիշեսցես
զմեր նընջեցեալն:

Յորժամ պահես ըզպատարազն, յիշեա եւ զիս
ըզբաղմամբդ:

Ջի եւ մեզ ողորմեսցի ի միւսանգամ իւր գալըս-
տեանն:

Հօրըն փանք Որդւոյն պատիւ. եւ նք Հոգւոյն
այժմ յաւիտեան.

Յաւիտեանս յաւիտենից՝ Քրիստոս օրհնեալ ի
համայնից:

Ջնտրեալն որ ասես՝ զեկեղեցի մի սուրբ:

Սրի. Օրհնեա տեր:

Եպիսոս. Ջի քո է զթութիւն եւ կարողու-
թիւն եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե- սպա յիշեն զլարագոյրն:

Դպ. Աբ. Գվ. Յայս յարկ նուիր. երես 8:

Ե- բռնան զլարագոյրն:

(Դարձեալ Շարական ԲԶ :

Որ ըզխորհուրդ քոյ գալըստեանն . յառա-
ջագոյն գուշակեցեր . մարգարեիւքն Իսրայէլի .
զորս ընտրեցեր յետ Մովսէսի . որք խօսեցան
Հոգւով սրբոմով . բազմապատիկ օրինակօք .
տո՛ւր մեզ փրկիչ ողորմութիւն . եւ ըզմեղաց
ըզլծողութիւն :

Ի մերձենալ ամաց վերջին . զոր տեսնող-
քնն ծանուցին . ըզհասանել մեր փրկողիդ .
առ ի վախճան ժամանակին . երեւեցար ի մեջ
մարդկան . զգեցեալ ըզկերպ ծառայական .
տո՛ւր մեզ փրկիչ ողորմութիւն . եւ ըզմեղաց
ըզլծողութիւն :

Արհ . Օրհնեա տեր :

Եպիսկ . Օրհնեալ թագաւորութիւնն . ե-
այն ասենայն ըստ կարգի : Եւ սարկաւորն հրաման
առեալ կարգայ զաւերարանն , եւ ասէ զՀաս-
րաման յայնի :

Վերաբերութիւն Ընծայիցն :

Եկե հանդիսաւոր օր լինի եւ զսորբ խոր-
հորդն վերաբերել կասիցես , այս է արարողութիւնն :

Յորժամ պարարաբնն ասէ . Տէր Աստուած
օրհնեսցէ զամենեսեան . սարկաւորն . Սաղմոս
ասացէք Տեառն : Եւ դպիրն երգեն զՄեքաս-
ցաւիւնն ըստ խորհրդոյ սորբն կարգեալ : Այս .

Արհ . Մի ոք յերախայից :

Դպ . Մարմին տերունական :

Եւ գան ինկարիւղ ի սորբ խորհրդանոցն :

Արհ . Յարեւու եհար զխորան իւր . եւ ինքն
օրպէս փեայ զի ելանէ յառազատէ իւրմէ :

Դպ . Եւ ցնծայ նա օրպէս հսկայ . յընթա-
նալ ըզճանապարհս իւր :

Արհ . Ո՛րք ը՛ստ քրո՛ղմէ ի՛նչ ցնն :

Դպ . Խորհրդաբան ըր կերպա՛րա՛նի՛մք :

Եւ գան յարեւելց իողմն :

Արհ . Ճանապարհ արարէք այնմիկ . որ նստի
յերկնից երկինս ընդ արեւելս :

Դպ . Եւ կենդան ընտանիքս ի՛նչ ըրնորու-
թեանն . զերեքսրբեա՛նն օրհնո՛ւթիւնս . մա-
տու՛ն շա՛նե՛մք :

Եւ գան ի հարաւայնումն :

Արհ . Աստուած ի հարաւոյ եկեսցէ . եւ սքն
ի Փառան լեռնէ :

Դպ . Չամենայն ըզկենցաղականս . ի բաց
դընելով ըզգործս :

Եւ գան յաստիճան խորանն :

Եւ բարձրն ասացէ հանդարտութեամբ :

Համբարձէք իշխանք զգրունս ձեր ի վեր .
համբարձցին գրունք յաւիտենից . եւ մտցէ
թագաւոր փառաց :

Եւ պարարաբնն ինկարիւղ եւ հարցանէ :

Ո՞վ է սա թագաւոր փառաց . Տէր հզօր
զօրութեամբ իւրով . Տէր կարող ի պատերազմի :

Դպ . Ո՞վ զի զթագաւորն . ամցուն ընդունի-
ցիմք :

Բարյոյն. Համբարձէք իշն. որդէս է վերայ:
 Պարարաբնն. Ոչ է սա թագաւոր փառաց
 Եւ Տէր զօրութեանց:

Դոյ. Եւ ըզհրեշտակացն հանդիսապէս. ըն-
 ծայեալ բերեմք ըզկարգ:

Բարյոյն. Սա ինքն է թագաւոր փառաց:

Ե- պարարաբնոյն աւնն- է յեւայ Ժանանայն.
 Ե- իսաւանէն է վերայ ժողովրդեանն աւելով.
 Օրհնեալ է եկեալ անուամբ Տեառն:

Դոյ. Ա՛հա՛ ըմբռնիմք իմք:՝

(Բայց իսաւանէն ոչ ասոյ այլ յետ որբաբոր-
 ժանանն է որեւ է, զի ընծայան ասոյ զե- ես էն
 իորհուրդ սորբ:)

Ապա Իրչ. Եւ եւս խաղաղ: Եւ եւս հաւ-
 աստով եւ սրբութեամբ. երես 19: Ե- այն ա՛ն-
 նայն ըսոյ կարգէ:

(Յաւարտան պարարաբնն Շարահան Գ2:

Ո՛ր ըզնորհոս աստուածային սա ի վերնատ
 իջեալ յերկնից. պարգեւեցեր հիւսիսականացս.
 Ի ձեռքն սուրբ վարդապետին. անշնանօք
 սորա ողորմեա՛ մեղ Աստուած:

Ո՛ր զգիտութիւն քո զերկնային եւ զհո-
 զեւոր զեմաստութիւն. անատապէս ծանա-
 լեցեր յեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռքն
 սրբոց թարգմանչացն. անշնանօք սոցա՛ ողոր-
 մեա՛ մեղ Աստուած:)

ՉԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԻ

Ձիւն Սուրբաստուածին Բրչ. Վասն խաղա-
 զութեան ամենայն աշն. ի լման:

Դոյ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:
 Ե- սխանին զկարգ յեւնադրոսութեանն. Սղճ.
 ՃԻԱ. Ուրախ եղէ ես: Ե- երբ ձեռք կարգն
 Սրի. Օրհնեա տէր: Եդէս. Ձի ողորմած եւ
 մարգասեր:

Ե- սխանին զմաշո- սաղման սորբն. Ե-
 այն ա՛նանայն ըսոյ կարգէ է:

ՉԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՒԵԳՍԱՐԿԱՒԱԳԻ

Գան աւաջն սեղանոյն աւելով Շարահան Գ2:
 Ուրախ լեր սուրբ եկեղեցի. երես 51:

Ե- սպա ծորանն է պարարաբն:
 Ե- եղևնիդոսն ինկարգէ սորբ սեղանոյն:
 Սրի. Օրհնեա տէր:
 Եդէս. Օրհնեալ թագաւորութիւնն. Ե- այն
 ըսոյ կարգէ, Գնչե- սսի Ձի ողորմած եւ մար-
 դասեր:

Ե- սխանին զկարգ յեւնադրոսութեանն. Սղճ. ԹԳ.
 Տէր ո՛վ կացցէ. Ե- այն: Ե- յաւարտան աջնիցն:

Ճաշո- սաղմոս:

Այ. Տէր, որպէս զինու. հաճութեամբ քով
 պսակեցեր գնոսա:

Փե. Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ
 սո. զաղաղակ իմ:

Ընկերց. Առաջ. Գ. 1: Լուարուք մանկ. Վ. 9:
 Մբբ. երեմ. Ա. 1: Պատգամն Այ որ եղ. Վ. 10:
 Մբբ. երեմ. ԼԳ. 15: Յաւուրսն յայնսոսկ. Վ. 18:
 Մբբ. Ուէ. ԺԳ. 10: Այսպէս ասէ Տէր. Վ. 10:
 Գործ. Զ. 2: Կոչեցին երկրոտասանքն. Վ. 7:
 Առա. Ա. Տէմն. Գ. 7: Բայց կրթեա. Վ. 16:

ԱԼԷԼ-:

Հողուով սրբով զօրացեալ նք Ստեփ. որես է
 Բ առաջ ծննդեան:

Ա-եդ. Ղկ. Ժ. 21: Ինմին ժամու ցնծ. Վ. 24:

Փառք քեզ Տէր: Հաւատամք: Քրչ. Ե. եւս
 Տաւատով աղաչեաց. 15:

Ե- յեդ է ծածուկ աղջնիցն Ոչ որ արժանի,
 Կարող սարկաւաքն. Եւ եւս խաղաղու: Միաբան
 ամենեք: Ե- դասնան է կարգ յեռնադրո-նեանն:

Ե- է վարկէն՝ սրկ. յայնէ. Սաղմոս ասացեք.
 Ե- Գլխիսն երգեն զսրբասացո-նի-նն ըստ առաջ
 պարշաճի. Ե- յառաջ մարդի պարարաքն:

Ե- նո-խրեալն մարմէ է կարգ սարկաւաքացն.
 Ե- սպասաւորեսցէ սրբոյ խորհրդոյն, Ե- հաղոր-
 դեսցէ մարմոյ Ե- արեան Տէաւան:

ՉԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ

Ելանէն ասենայն զարդոտ է դորան եկեղեցոյն
 սրբատոյ, Ե- ասէն Շարախան Գ. 2:

Այսօր աստուածութիւն զուարճ. երես 41:

Սաղմոս ճԻԱ: Ուրախ եղէես՝ ոյք ասէին ցիս:

Սրկ. Սուրբ եկեղեցեաւս: Եպիս. Առ դրան
 սուրբ եկեղեց. 42:

ՇԲ. Գ. 2: Ուրախ լեր սուրբ եկեղեցի. երես 51:

Սըճ. ՂԹ: Աղաղակեցէք առ Տէր ամ. 5:
 Գարշեալ Սըճ. ճԺԻ: Խոտտովան եղերուք
 Տէաւան: Ե- յասէն զորանն Բացէք ինձ զգրունս
 արգարու. բռնան զորանն:

Ե- մարմեն յեկեղեցին. Ե- ասէ

Եպիս. Ի մէջ տաճարիս եւ ասաջի աս-
 տուածընկալ. երես 5: Այս

ՇԱՐՔԱՆ Գ. 2:

Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ
 եկեղեցի. եւ Բրիստոս թագաւորն ի ամս պա-
 տարադեալ. Եկայք հաւատացեալք երգես-
 ցուք Բրիստոսի երգ նոր: Գանք հրեշտա-
 կացըն վայրիջեալ յերկնից երգեն ասելով.
 հրաշալի ձայնիւն եղանակելով. երգեն զերգս
 օրհնութեան երբեանկ սրբասաց ձայնիւ: Ուրախ
 լեր բերկրեալ հարսնացեալ սուրբ եկեղեցի.
 պայծառացո՞ զմանկունըս քո՞ յօրհնաբանու-
 թիւն. ծագողին ըզնոյ լուսոյ ի քեզ մայր
 եկեղեցի:

Ե- Ելանէն է բեմն, Ե- Եպիսկոպոսն ինկարիկ
 սուրբ սեղանոյն:

Սրկ. յայնէ. Օրհնեա ատեր: Եպիս. Օրհնեալ
 թագաւորութիւնն:

Ե- մարմեն է պարարաք:

Յորժամ ասէ Եպիս. Զի ոգորմած եւ. սխանին
 շիրք յեռնադրո-նեանն: Ե- է վարկէն՝

Ճաշը - սուրճու ճԼԱ:

Այ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծացեն:

Փի. Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն Տեղութիւն նորա:

- Ընի. Բրդ. Եղեի. Գ. 17: || Որդի մարդոյ. Վ. 21:
- Մրդ. Մաղա. Բ. 5: || Ուխտն իմ որ ընդ. Վ. 7:
- Մրդ. Եսայ. ՎԱ. 1: Հողի Տեառն ի վր իմ. Վ. 6:
- Կնի. Ա Պետր. Ե. 1: Զերիցունս այսու. Վ. 4:
- Առտ. Ա Տիմոթ. Ա. 12: Շնորհ սնիմ. Վ. 17:

ԱԼԵՄ:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծացեն:

Աւեր. Ղո-ի. Գ. 14: Եւ գարձաւ Յս. Վ. 22:

Փառք քեզ Տէր: Հաւատամք: Եւ այն ամենայն ըստ կարգի՝ փնէ- ստի Մարմին աերու- նականն:

Եւ դառնան ի կարգ յեռնադրութեանն եւ զծման ի Բանանայութեան:

Ապա յաւարտմանն յայնի որի. Սաղմուս ասալ յէք. եւ յաւազ մարչի պարարաքն:

Եւ նորընծայն ինքնին մարտացե զպարարաքն ընդ հայրապետին. եւ հաղորդեացի, բայց ոչ ի բերանն՝ այլ ի յոտն որալով զբժութեան:

ՆԱԻԱԿԱՑԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Յաւարդ օրհնութեան եւ զծման եկեղեցւոյն՝ սխանին զճաշը - ողորմեային. եւ ապա մտանէն ի պարարաքն:

Եւ նախ ինքն եղեակոպոսն որ զձն՝ մարտացե զաւազնն պարարաքն ի վերայ նորոգ որբոյ յեղանոյն ի վեջ նորոյ եկեղեցւոյն. եւ ապա յայլ ասորն սխանին օրհն այլ Բանանայ:

Ժամամար եկեղ. Զխաղաղութի շնորհ. 10:

Ճաշը - շարական ԳԶ:

Փի. Գովեա Երնասողեմ զՏէր:

Ուրախ լեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոն սրբայն երկնից այսօր պրնակեաց ըզքեզ խաչուն իւրով. եւ զարդարեաց զամուրրս քո՝ գրանշէի փառօքն իւրովք: Խընդա յոյժ դուստրը Սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո՝ նորոգմամբ. եւ թաղաւորն երկնաւոր հանձեցաւ բրնակել ի քեզ: Ընդ գասս երկնաւոր գործքն վերառեալ տճնեմք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս. սրբին լեր հարսն անարատ անքրնին քո խորհրդով:

Այ. Դասք հրեշտակացն վայրիջեալ յերկնից երգեն անելով. հրաշալի՛ ձայնիւն եզանակելով. երգեն զերգս օրհնութեան երբեակ սրբասաց ձայնիւ:

Առջին աղան

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի
յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասացէ տունն Իսրայէլի. զի յաւիտեան է
ողորմութիւն նորա:

Ընկերց. Առաջ. Ը. 22: Տէր ստացաւ. 4. 34:
Մրգ. Եւայ. Զ. 1: Ես եղեւ յամին յոր. 4. 10:
Առա. Եբրայ. Թ. 11: Այլ Բն եկեալ: 4. 15:

Աւել:

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո. ահա աւ-
դիկ քաղաքդ Աստուծոյ:

Աւեր. Յովն. Զ. 45: Ամենայն որ լսէ ի
Հօրէ. 4. 56:

Այս Փառք քեզ Տէր: Հաւատամք. Ե- այն
սինայն ըստ հարգի:

Սրբասացութեան. Հրեշտակային կարգաւ. 17:

Ե- ուն օր նաւահարիս է եկեղեցոյ. Ե- զրօնն
հարարեցին խաչէ Ե- եկեղեցոյ ըստ ունեթիւն
վերացման սորբ խաչին. Ե- յետ ուն աւորն
րօնեցին զրօն Սրբոցն յորոց անուան օձա-
եկեղեցին Ե- խորանն Ե- սինայն Ե- այլ խորանն:
Ե- յետ աւարման սոցա սպա մոցէ յեկեղեցին րօն
Սրբոցն ըստ հարգի րօնացոցին:

Հ Ա Ր Ս Ա Ն Ե Ա Յ .

Յետ հարարման խորհրդոյ պատկն հան յեկեղեցի
աւել Սղմ. ճժի: Խոստովան եղերուք. մեկե-
ցոյն վայր՝ Բացէք ինձ զգրուես արդա: Ե- Բ-
ցեալ զրոնն մոռնէն յեկեղեցին. Ե- սին

Սաղմոս ԴԹ:

Ազաղակեցէք առ Տէր՝ ամենայն երկիր.
Ճառայեցէք. է լմն. (Երէս 5):

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Բրչ. Սուրբ եկեղեցեաւ: Առ. Առ դրան
սուրբ տաճարիս եւ առաջի անճրնկալ. Երէս 5:

Ե- հացոցանէ Կանանայն զիւսայն Ե- զնարանն
աւել բէմն: Ե- սին

Ժամանոր եկեղեցոյ:

Ձխաղաղութիւն շնորհեա եկեղ. Երէս 10:

Սրչ. Եւ եւս խաղաղութիւն. Բնն. Օրհնութիւն
Եւ վառք:

Ճաշն շարական ԳԶ:

Փոի. Տէր թաղաւորեաց. վայելչութիւն զգ:
Ուրախ լեր սուրբ եկեղեցի. Երէս 51:

Սրչ. Օրհնեա տեր:

Բնն. Ձե քո է կարողութիւն:

Սրչ. Պաօստուհ:

Դոյ. Սբ Աստուած սուրբ եւ հօր. Եր. 12:

Ե- համբարէն զիւնն քեայն Ե- հարանն:

Քարոզ:

Սրի՛. եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ:

Վ ան խաղաղութեան ամենայն աշխարհի-
երէս 12: Եւ այլն ասենայն ըստ կարգի:

Աստուծոյ ստորագրութիւն:

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թա-
ղաւոր. եւ ի փրկութեան քում ջնճացէ յոյժ:
Չցանկութիւն սրտի նորա ետուր նմա. եւ
զկամս շրթանց նորա ոչ արգելէր ի նմանէ:

Ընթերց. Ծանօր. Ա. 26: Եւ ասաց Աս-
տուած. արաց. Վ. 27: — Բ. 21: Եւ էարկ
Տէր Աստուած թմրութիւն. Վ. 24:

Աստուծոյ Գ. 20: Որդեակ, իմոյ իմաստու. Վ. Ե. 14:
Մրգ. Եւայ. ԿԱ. 9: Եւ ծանիցի ի մէջ. Վ. ԿԲ. 7:
Աստուծոյ Ե. 22: Կանայք ի բրեանց. Վ. 33:

Աւել:

Կացցէ դշխայ ընդ աջմէ քումմէ. ի հան-
դերձս սակհհուսն զարդարեալ եւ պաճուճեալ:
Կամ Յարեւու եհար զխորան իւր. եւ ինքն որպէս
փեսայ զի ելանէ յառազատէ իւրմէ:

Աւել. Մարտի. ԺԺ. 1: Եւ եղեւ իբրեւ
կատարեաց. Վ. 9:

Գող. Փառք քեզ Տէր Աստուած մեր:
Սրի՛. Հաւատամք: Բնն. Իսկ մեր փառաւ-
որեացուք. 14: Աղա

Քարոզ:

Սրի՛. Վ ան ուղղելոյ զզնացս մեր ի ծանա-
պարհս խաղաղութեան զՏէր աղաչ. Եւ այլն:

Եւ դնեն զպատիւն աստուծոյ քեզին, եւ ասե-
նայն օրհնէ զպատիւն, եւ ասէ:

Աղջիտ:

Տէր Աստուած զօրութեանց եւ արարիչ:
Խաղաղութիւն ՚ի ամենեցուն:

Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ:
Եւ ասա ասնոց զպատիւն, եւ դեռնապիւր
սրբի իսկան, եւ դնէ ի իւրեանց փեսային եւ հար-
սինն. եւ ասէ զԱղջիտ:

Յանունդ քո կենդանի Աստուած եւ Տէր:
Եւ ասա սարխաւսքն արարչի. Եւ եւս հաւա-
տով. Եր. 15. Եւ մարտի պարարտքն: Եւ հաղոր-
դին փեսայն եւ հարսն մարմնոյ եւ արեան Տէրուն:

Իսկ յեր ասարամն սրբոյ պարարտքին՝ Նըս-
տոցանէն զփեսայն. եւ ասէն

Հարմար ԲԿ:

Ով երանելիդ անցուն. տիեզերական իշ-
խանութեամբ ընկալար ի Քրիստոսէ ըզթագ-
պարծանաց. * ո՛վ թէոզոս մեծ թագաւոր.
վասըն մեր բարեխօսեա առ թագաւորն երկ-
նաւոր: Որ քոյին նր աղօթիւքբոյ վանեցեր ըզ-
թընամին. կրկնով ըզստանայ. ընդ երկնայ-
ինսըն դասեցար. ո՛վ թէոզ: Ուստի եւ մեր
հաւատացեալքս. տօնեմք զքո՛ յիշատակս.
օրհնութիւն առաքելով ըզքեզ պրօսկողին.
ո՛վ թէոզոս մեծ թագաւ:

Կամ զխարափախի ճաշոց շր. ԳԿ. Ուրախացիր
պսակ կուսից: Աստուածաշննի. Խաչի. Փառս:

Քրդ. Սուրբ խաչիւս: Աղջիտ. Պահպանեա:
Հայր մեր որ յերկինս:

ՆՆՉԷՑԵԼՈՑ ՊԱՅՏԱՄԱՆՆ

Մեղեդիէ կամ որակ զառարն ասա:

(Բայց ոմանք է նվեցելոց պաշտաման պարարգին քո-
խանայ վիշտոյն զքնարեալին զի մանն առն. Յորժամ
մտցես. էրէն 43. է- Սրբաւոյն-իւն՝ Ասան յիշատակի):

Ժամամար, շարական է- այլն ասեմայն յառար
պարաշմեցն է:

Երբ պաշտաման նվեցելոց:

Սրէ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Դո. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրէ. Ի քէն հայցեմք մեզ օգնութիւն,

Ամենասուրբ Երրորդութիւն:

Դո. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրէ. Տուր աշխարհիս խաղաղութիւն.

Եւ հիւանդաց առողջութիւն.

Եկեղեցւոյ հաստատութիւն.

Նընջեցելոց արքայութիւն:

Դո. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրէ. Սուրբ անմահ պատարագիս միջնոր-
դութեամբ:

Դո. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Ի հանդիսէ առարն ոմանք յաւելան՝

Հնորհիւ առուրս մեզ ողորմեա:

Ադո. Բրշ. Սաղմոս ասացէք Տեառն Աս-
տուծոյ մերոյ, դպիրք:

ՊԱՅՏՈՆ

ՀԱՆԳՍԵԱՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Յաւար պարարգին, զիս Պահպանեա ողբեցն՝

Քնն. Օրհնեալ Տէր † մեր Յս քս. ամէն:

Սրէ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-
չեցուք. ընկալ կեցո եւ ողորմեա:

Քնն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որ-
դւոյ եւ Հօգւոյն սրբոյ. այժմ եւ:

Ե- Խանկ աճէն:

Ե- սխանի Շարական հանդիսեան, ըստ յայնի:

ԱԶ.

Որ անձան ածորէնս թեամբ ի փրկութիւն
անգգի մարդկան խնարհեցար Բանդ Ասորւած.
* այսօր հանգումս եւ ըզմեր ըզնընջեցեալսն
ընդ սուրբս քն. որ միայնդ ես մարդասէր: Որ
անչարչարելիք մարմնով Եկիր կամաւ ի շար-
չարանս. եւ ի խաչին բեւեռեցար. հեղեր
զարհենդ ի փրկութիւն. այսօր հանգում: Որ
թաղմամբն երեքօրեայ ըզբրանութիւն մահու
լուծեր. եւ կոխեցեր զիշխանն մահու. եւ վեր-
ածեր ըզնընջեցեալսն. այսօր հանգումս:

Մձ. Որ զաւետիս Հոգւոյն ի հրեղէն ի
հրեշտակէն ընկալար ուրախելք. բերկրեալդ Տէր
ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Անրսկիզբն
Բանրն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբն
բսկիզբն ի կուսէդ. Գրիստոս Ասորւած թա-

գաւորն յաւիտենից: Ա՛ղաչեմք ըզքեղ սուրբ Ա՛ստուածածինն սա քրիստոս բարեխօսեա՛ն փրկել ըզժողովուրդս ի՛ւր զոր գընեաց արեամբն ի՛ւրով:

ԽԷ. Հրաշակերտ եւ զօրեղ փայտ խաչի՛ք քոյ քրիստոս. գաւազան զօրութեան ի՛ յերկրի՛ երեւեալ. * եկայք ժողովուրդք երկրպագեացուք: Չօր շրեհիցըն ծածկեալ զանթարչելի՛ ըզգանձըն. փափագմամք թաղուհւոյն փայտ կենանց յայտնեցաւ. եկայք ժող: Փառք Հօր եւ: Սա է զէն յողթութեան հաւատանց լոյց. ակնյեանն եւ կնիք յողթող ընդդէմ թրշնամայն. եկայք ժող:

Այժմ եւ միշտ: Ար հրաւիրեցեր յանմահութիւն զանոգըս մարդկան. անմահութեանց բանչսօղ քրիստոս. աղաչանօք Աստուածածնին. այսօր հանդսմմ եւ:

ԱԿ.

Չեռչք քո՛ արարին եւ բստեղծին զիս ի հօղմմ յ. ի՛ յօրհնել ըզքեղ Աստուած յաւիտեան: Ի՛սկ պատրանօք բանաարկուին խափանեցայ յանձառ լուսո՛յն. եւ գարձայ անդրէն ի հոլ յորմէ ստեղծայ:

ՄԶ. Ո՛վ գերահրաշ ծաղիկ բուրեալ յեղեմայ. հստ անմահութեան ծնընդօցս Եկայի. յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. * օրհնութեամբ ըզքեղ մեծացուցանեմք: Գաւ լուծիչ երկանց բարձօղ անիծից. ծագումն արեւուն

լուսոյն ճըշմարտի. սրով հեքքեաւ խաւարն անաջին. օրհնութեամբ: Ըզքեղ ունիմք բարեխօս կոյս ամէնօրհնեալ. մայր անարատ Իմանուէլի. տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ:

ԽԷ. Անդան քո Տէր զօրութեանց հաւատով կանդնեցաւ ի խորանի քում. * եկայք ժողովուրդք երկրպագեցուք: Ա՛լմ պատուական ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք: Փառք Հօր եւ: Ի՛ սմա մատուցաւ ճըշմարիտ պատարագ եւ զենունն անապական. եկայք:

Այժմ եւ միշտ: Մըխիթարիչ սուրբ Հողի լուսաւորեա զմեր նրնջեցեա՛լ լսն. եւ հանգստից հօղիս նոցա ընդ սուրբքս քո:

ԲԶ.

Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից. մարդասիրութեամբըդ քո խընայեա՛ յանձիրս մեր. * ստեղծիչ կենդանեաց եւ հանդուցիչ նրնջեցելոյ: Ի՛ խաչին բեւեռեցար. զմահութեամբ զեղանութի՛. յաւիտենից ըզնջեցեալօրն վերածեր յանմահ ի կեանս. ստեղծիչ կեն:

ՄԸ. Խոնարհեցար ի բարձանց. եւ մարմնացար ի կուսէն. սր նրստէիրդ ի քրովե՛ս արարիչդ արարածոյ: Երկինք շէին բաւական փառաց անմահ անեղեգ. արդանդ կուսին ժուժկայեա՛լ ընդունել ըզգանձդ երկնային: Յորմէ սարսեալ սերովքըն սչ իշխեին

մերձենալ. ի խանձարուրս պատեցա՞ր եւ եղար ի մուր յանբանից:

ԽԷ. Այսօր խընդրի պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթա՝ ի ձեռն աստուածաւեր գըշխոյին. եկայք * հաւատացեալք երկրպագեցուք աստուածային սուրբ նըշանին: Այսօր ընծայե՛ Գողգոթա ըզձածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խընկովք. ի ձեռն երանելոյն Յուդայի. եկայք հաւատ: Փառք Հօր: Այսօր ի ձեռքն փրկական սուրբ խաչին կենագործի պատանին մեռեալ. եւ ողբայ սատանայ ըզկործանումն իւր. իսկ մեք Բրիտոսի՛ հաւատ:

Այժմ եւ միշտ: Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա ըզմեր ըզնընջեցեալսն. յորժամ գայցես անձառ փառօք հատուցանել մարդկան ըստ գործս. եւ մեր նընջեցելոցն շնորհեա՛ դասիլ ընդ սուրբըս քո՛:

ԲԿ.

Գայ՛ զօրութեանց թագաւորն. ի նորոգել զարարածս. ի ձայն ահեղ բարբառոյ. զարթուցանե՛ զնընջեցեալսն: Գողան երկինք եւ երկիր. յահէ փառաց Բրիտոսի. հուր բորբոքեալ ընթանայ. բոցակիզէ զմեղաւորսն: Կորսնիտուր զարդարին. գասէք սրբոց կուսանացն. ուրախութեամբ մըտանեն ի յաւագաստ փեսային:

ԱԶ. Ար՛ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդ-

կան Հայր երկնաւոր ըստ մարգարէին. եւ ետուր բնութեանս այսօր պարգեւ ըզկոյրն սուրբ ըզձնօղ Արդւոյդ միածնի. մաղթանօք սորա՞ն՝ Տէր մեղ սղորմեա՛: Ար՛ ցօղեցեր ի մեղ յամպ օրինաց Արդի՛դ այսօր զկոյրն Մարիամ. յորմէ ծընար մարմնով եւ բարձեր նովաւ ըզմեղս նախասեղծին Ադամայ. մաղթանօք: Ար՛ մաքրեցեր Հոգիդ սուրբ ըզսիրտ եւ զարգանդ մօր քոյ՛ փառակցին. այսօր յամուլ ծնողաց նորին ետուր ըզմայր Բանին զօրհնիչն Եւայի. մաղթանօք:

ԽԷ. Ճանաչայթ փառաց Հօր Արդիդ միածին. որ ըզլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ. * այսօր ի Թաբո՞ր փառօք փայլեցեր: Ար՛ աննիւթ սրովբէից անհաս ի վերքան ըզբան ծառայի կերպիւ պարածածկեալ ըզլոյսդ անըստուեր. այսօր ի Թաբ: Փառք Հօր: Ար՛ հրեղենացն անմերձեալի հուր աստուածութեանդ. ի հոգեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր ի Թաբ:

Այժմ եւ: Ի՛ քեզ եմք անպահնեալ. ամենօրհնեալ սրբբուհի. լեր բարեխօս անգաղար. վասքն մերոյ փրկութեան:

ԳԶ.

Յահաւոր քո՞ զայլստեանն յորժամ գաս Տէր ի յերկնից անային քո՞ զօրութեամբդ. եւ նըշան սբ խաչին պայծառանայ ի մեջ եր-

կրի: Նորոգին տարերք երկրի ի ձայնէ հրշման
փողոյն. որ գոչէ զկենդանութիւն. ասէ արիք
էկրն Տէր կենդանեաց եւ մեռելոց:

ԾԵ. Դանք անմարմնականք երկնաւոր
զօրացն ի մէջ հովուացն օրհնէին ըզձագու-
մբն լուսոյ. մեծին ի Հօրէ՛ մեղ ի փրկութիւն:
Եւ մո՞զքն աստեղը նըշանաւ էկի՞ն ի Բեթ-
ղէէ՞՛՛. Երկիր պազին Տեանն. եւ ի յայրին
մատուցին զընծայս խորհրդոյ: Եւ հովիթէքն
երգէն ընդ հրեշտակս փա՞ռք ի բարձո՞ւնս
մեծիդ Աստուծոյ. որ Եկիր եւ փրկեցեր ըզ-
ախեղէրս քոյն՝ յայտնութեամբդ:

ԽԶ. Քեզ Քրիստոսի կաթնը կէ կէ զեցելոյ
շնորհողն. զյաղթական ըզպատուական զաս-
տուածընկալ սուրբ նըշանս. մատուցանեմք
զօրհներգութիւն միշտ ի բարձունս: Սա կա-
մաւ քո՞ Քրիստոս եւ թեւօք ամենագօր սուրբ
Հողոյն. եւ զասուք հրեշտակաց թռուցեալ
էկաւորի ի լեանն Անրագայ բնակել ի նմա:
Փառք Հօր եւ Որդոյ: Եկանք ժողովորդք
Երկրպագեցուք անձային որ նըշանին. համ-
բարձէք միաբան ըզձեռս ձեր ի սրբութիւն.
Եւ ըզընակեալն ի սմա միշտ փառաւորեցուք:

Այժմ եւ միշտ: Շնորհեա՛ մեզ Տէր սղոր-
մութիւն ի ծագել սրբոյ խաչին. որով եղեւ
մեզ փրկութիւն. զի նովաւ ելցաւք ընդ
առաջ Աստուածորդոյ որ ի յերկնից:

ԳԿ.

Ընդ զըւարթունս երկնից օրհնեցէք ըզ-
նըստեալն ի յաթոս փառաց. * զի հանգու-
ցէ ըզնընջեցեալ ծառայս իւր յաւիտեանից.
Ի միւսանգամ փառաց իւրոյ դալստեանն:
Ընդ սերտեկցըն սրբասաց ձայնիւ գովեցէք
զՈրդին միածին. զի հանգուցէ:

ՄԶ. Աստուածածին խորան լուսոյ անվայ-
րամակ արփայն կենաց որ եղև՞ր արեւելք
արեգականն արգարութեան. եւ նըստելոցս ի
խաւարի լոյս ծագեցեր. * վասն որոյ ամենե-
քեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Անա-
պական տաճար եւ մտքնի անկիզկէ՛. որ զան-
շէ՞ջ հնր անութէն ի քեզ տարեալ կրե-
ցեր. որով բնութեւս կիղեալ շեջաւ կրից բոց.
վասն որոյ ամե: Անդանի տապանակ կտա-
կարանաց նորոյ սխախս. որով ե՞ւք յերկիր
անետեաց հորդեալ. Հոգւով ի քեզ տրպաւու-
րեալ Բանին. վասն որոյ ամե:

ԽԷ. Ով պահապան որ ծագեցար յերկնայ.
նըշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ
թշամոյն: Գու՛ փակելոյ գրախտին բացող եւ
ստաջնորդ աւանակին. որ զըցեղէնս սուրբն կապ-
տեաց անեղին հրամանաւ: Փառք Հօր եւ: Քեւ
ցընծան ըստօրայինքս ամ ի միւսանգամ քո
դալստեանն. եւ յաւե՛ժը զըւարձանան՝ գաղք
անմարմնոցն անեկցս:

Այժմ եւ միշտ: Ընդ քերովբէիցն փառաբանութեանց բարեբանեցէ ք զչողին ճըշմարիտ. զէ հանգուցէ ընդնջեցեալ ծառայս իւր յանկտենից. ի միւսանգամ փառաց իւրոյ գալըստեանն:

ԴԶ.

Ահագին է օրըն գատատանին. եւ դո՞ղումն առաջէ բեմին. սարսափին հրեշտակք սասանի երկիր. * ընդնջեցեալըն մեր մի անտես աններ. յահագին աւուրըն գատատանին. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին: Բանին դրուեք երկնից բարբառին հրեշտակք. բանին գերեզմանք բորբոքի գեհեն. ընդնջեց:

ՄՅ. Ծագումըն հրաշալի սր անյայտ էր ի մէնջ. եւ Բանըն հայրական անբմբռնելի. հուր փայլանկացեալ եւ ի մարմնի բնակեցաւ. անվընաս պահելով զարարածս ամենայն: Ծագումըն հրաշագործ սր ի կուսէն ծագեցաւ. ծանաղայթե լով զարարածս ամենայն. երկինքք ցընծային եւ երկիրս ուրախանայր. եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շըրջեցաւ: Առքեղ ապաւինիմք ամենասրբուն հի. գերազոյն եւ հրաշալի եւ բաշխօղ բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ աստուածային Բանին:

ԽԶ. Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս. որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. * սա՞նք պահեցէ ըզմեզ յամենայն փորձու-

թեան: Քանդի ի սմա բարձրացսր Աստուած. եւ ի սմա հեղեր բզպատուական սուրբ զարիւնըդ. սա՞նք պահ: Փառք շօր եւ: Եւ ըզքս միւսանգամ բզպալուտորդ. նըշանաւ խաչե քս ցուցեր աշխարհի. սա՞նք պահես:

Այժմ եւ միշտ: Գալարին երկինք սրպէս մաղանթ. գերազոյն գոչէ փող գարբեկեան. գերապանծ լուսով զարգարին արդարքն. ըզնընջեցեալըն մեր մի: Աս. Խաչն փայլէ յարեւելից եօթընպատիկ պոյժաւ քան զարեգակն. պոյժառանան ամբողարքն. եւ մեղաւորքն ծածկին յանրատուեր լուսոյն. եւ ծառագայթ սուրբ խաչին առաջի քս գայ մարբեանդն քեզ իջեվանի. ի յայնմ աւուր անհեղին սղորմեա հոգւմէց մեր նընջեցելոցն:

ԴԿ.

Ես անայի Տեր սղորմեա հոգւոյ իմոյ բազմամեղի. որ բնակեալք ես ի յերկինս. եւ յանմարմնոց փառաբանին. * յիս մարդասիրեաւ բազմադութ փրկիչ. եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Պակասեցայ յազգատոհմէ. լըքեալ թողի զկեանս աշխարհի. եւ մարմին ունայնութեան գարձաւ ի հո՞ղ ուստի ստեղծաւ. յիս մարդաս: Յաւուր յայնմիկ մատնեցայ ի ձեռս ասեղ հրապարակին. եւ առքեղ ապաւինիմ ստեղծող բնաւից Տեր բոլորից. յիս մարդասիր: Հայեցայ ի բարձունս սո. քեզ կարող յամբրնկալ զիս յարկս արդարոյ. ամբածած ուկ աջու-

վիճք քո՛ . յի՛ն մարդասիրեա՛ն բազմաճուժ փրկ :
Ա՛հա՛ն ի՛ խաղաղութիւն դարձայ ի հո՛ղ յորմէ
ստեղծայ՝ նորոգո՛ղ ճարտարանպէս պարզեա-
սու՛ն սղորմութեան՝ . յի՛ն մարդաս :

ՄԶ . Աստուածածին՛ն մայր եւ կոյս . ծանօղ
արեգականն արգարութեան . որ լուսանորեայն
ըզմեղ . * հոգեւոր երգսլ զքեղ բարեբանեմք
եւ փառաւորեմք ըզմի՛ն քո՛ զՍրբոհն : Է՛լոյծ
զօրէնքս բնութե՛ն մարդկան . հրաշափա՛ն քո՛
ծրնունդ եւ զէնութի՛ն բնութե՛ն անբող պահեալ .
եւ կուսունք ըգ քո՛ ոչ խախտեցան կրնիք . հոգեւ-
որ երգ : Չքեղ՛ մորենի անկեղ . լեւուրն վի-
մածին գնուրն փակեալ եւ անրեր կրնքեալ .
նախատեսացրն գուշակեալ մայր եւ կոյս . հո-
գեւոր երգ :

ԽԶ . Խա՛շի քո՛ Քն երկրպագէն արարածք
ամենայն . որ ի՛ փրկութի՛ն մեղ կանգնեցաւ .
սա՛հ էղիցի մեղ պահանգան յաղթո՛ղ . * անրե-
ցուցանել ըզմեղ ի պատրանաց բանասրիւի՛ն :
Ի՛ սմա բարձրացար բարձօղղ անիծից . որ փա-
ռաւորեալդ ես ընդ Հօր . ժողովե՛լ ըզհեռա-
յեանրն կենսաբեր փայտիւն . անրեցու : Փառք
Հօր եւ : Մո՛վաւ լուսաւորեցան արարածք սմ՛ .
սմա՛ սպասէին արգելեալքն ի մեղսանէր բան-
տին . որ ազատեայ ըզմեղ ի պատրանաց բանս :

Այժմ եւ միշտ : Այլ կենդանիքս օրհնեմք
ըզքեղ Քրիստո՛ս թագաւոր յաւիտենից . որ

փառօք փառաւորիս . ի յերկնայնոց եւ յեր-
կրայնոց . յի՛ն մարդասիրեա՛ն բազմաճուժ փրկիչ .
եւ փարստեցո՛ զցաւս անձին իմոյ :

Եւ սսի սաղմոս յայնի՛ն յառաջ Ժան զԱ-
դարանն հանգստեան :

Ալէլուիա . ալէլուիա .

Սաղմոս ճիթ :

ԿԳ . Եղիցին ականջք քո՛ ի լսել ըզձայն
աղօթից իմոց :

ՓԵ . Ի՛ խորոց կարգայի առքեղ Տէր . Տէր
լուր ձայնի իմում :

Եղիցին ականջք քո՛ ի լսել զձայն աղօթից
իմոց :

Թէ զանօրէնութիւնս քննես Տէր . Տէր ո՞
կարէ կալ առաջի քո՛ . զի ի քէն է քաւութիւն :

Ասան անուան քոյ համբերի Տէր . համբեր
անձն իմ բանի քում . յուսացաւ անձն իմ ի Տէր :

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ . ի
պահէ առաւօտու յուսացաւ իւրայել ի Տէր :

Ի Տեառնէ է սղորմութիւն բազում . եւ ի
նմանէ է փրկութիւն . — Եւ նա փրկեաց զիս-
րայել յամենայն նեղութեանց նորա :

ՄԵԷ . Ո՛րթիւն :
Քն . Խաղաղութիւն ամենեցուն :

ԴԿ . Եւ ընդ հողույդ քում :
ՄԵԸ . Երկիւղածութեամբ լուարուք :

Քն . Սրբոյ Աւետարանիս որ ըստ (Մատ-
թէոսի) :

ԴԿ . Փառք քեղ Տէր Աստուած մեր :
ՄԵԹ . Պաօսխումէ :
ԴԿ . Ասէ Աստուած :

Եւ լինելոցեալ ինչի Աւետարանն հոգեւորեան ըստ յայնին:

ԲԿ. ԴԿ. — Ի ՄԱՏԹԻՈՍ:

- ԺԱ. 25. Յայնմ ժամանա. վերջ՝ փոքրագի: 30:
- ԺԳ. 36. Յայնժամ թող. Վ. զնոր եւ զհին: 52:
- ԻԱ. 18. Եւ այգուցն. Վ. հաւատալ նմա: 32:
- ԻԵ. 31. Եւ յորժամ. Վ. յաւիտենակման: 46:

ԲԶ. ԴԶ. — Ի ՄԱՐԿՈՍ:

- Գ. 1. Գարձեալ սկսաւ. Վ. լսելոյ՝ լուսիցէ: 9:
- Գ. 26. Եւ ասէր. այսպէ՛ է. Վ. մեկնէր զնամ: 34:
- ԺԳ. 24. Այլ յաւուրան. Վ. անցանիցեն: 31:
- ԺԳ. 32. Այլ վասն առուին այնոր. Վ. արթուն կացէք: 37:

ԱԿ. ԳԿ. — Ի ՂՈՒԿԱՍ:

- Թ. 10. Գարձան առաքեալքն. Վ. սահառի: 17:
- ԺԲ. 32. Մի երկնչեր. Վ. ջեպցեն ի նմանէ: 48:
- ԺԵ. 3. Զգոյշ կացէք. Վ. առնել արարաք: 10:
- ԻԱ. 27. Եւ յայնժամ տեսցեն. Վ. լսել ի նրմանէ: 38:

ԱԶ. ԳԶ. — Ի ՅՈՎՀԱՆՆԻՍ:

- Բ. 13. Եւ էր մերձ գատիկն. Վ. ասաց Յն: 22:
- Ե. 19. Պինի ետ Յն. Վ. զառաքելչն նորա: 23:
- Ե. 24. Ամէն ամէն աս. Վ. առաքեացն զիս: 30:
- ԺԲ. 24. Ամէն ամէն ասեմ. Վ. պատուեսցէ զնա շայրն իմ: 26:

Երէ:

